ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

12 ապրիլի 2019 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 (վեց) անդամներ:

Բացակա էին Գեորգի Աղաջանյանը, Վահրամ Ապրեսյանը, Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը և Վարդան Սուքիասյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են վեցը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին,

2)<<Շողակաթ և Բյուրեղավան համայնքների Մոբիլ մանկապարտեզների էներգախնայողության արդյունավետության ապահովում և հարմարավետության բարձրացում>> ծրագրին ֆինանսական ներդրում կատարելու առաջարկությանը հավանություն տալու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 32-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեց որոշման նախագիծը:

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ավագանին որոշում է.

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 33-Ա/

Լսեցին

<<ՇՈՂԱԿԱԹ ԵՎ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄՈԲԻԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով <<Աստղացոլք>> հասարակական կազմակերպության նախագահի 2019 թվականի ապրիլի 10-ի N 30/04 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ <<Շողակաթ և Բյուրեղավան համայնքների Մոբիլ մանկապարտեզների էներգախնայողության արդյունավետության ապահովում և հարմարավետության բարձրացում>> ծրագրին 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ ֆինանսական ներդրում կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 34-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ _____

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՀԱՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ